

որակներ: Նորավէպի՝ իբրեւ ինքնորոշուած եզրոյթի մեկնարկից յետոյ արեւմտահայ իրականութեան մէջ ժանրն անցաւ տեսական հիմնաւորման բարդ եւ երկարատեւ շրջան, որի արդիւնքում ի յայտ եկան իրարամերժ բազմաթիւ տեսակէտներ: 20-րդ դարասկզբին եզրոյթի թարգմանութեան եւ ժանրային յատկանիշների համապատասխանութեան շուրջ ծաւալուած բանավէճերից յետոյ նորավէպ տերմինը, տեսականօրէն հիմնաւորուելով, մտնում է լիիրաւ շրջանառութեան մէջ:

## ԽՈՐՀՈՒՐԴ ԵՒ ԽՕՍՔ

Ոչ նման ուրիշ մահերու,  
Տարիները չեն մեռնիր հիւանդութեան, եւ կամ մահուան պատճառաւ,  
Պարզապէս անոնց ժամանակը կը հասնի,  
Ու անոնք թերեւս քիչ մը պարտասած,  
Տասներկու ամիսներու աշխատանքի հետեւանքով,  
Սակայն երբեք տխուր կամ ուրախ չեն, որ կ'երթան,  
Իրենց համար ծառայութիւնը անպայման հաճոյք էր,  
Հաւատարիմ ընկերակիցը, հին տարին կ'ըսէ,  
Ու մինչ գլխով խոնարհութեամբ ան կը մեկնի,  
Կը ծնի նորը առանց պորտալարի,  
Որոշ փորձառութիւն ձեռք ձգած արդէն,  
Սկսելու առաւօտը Յունուար Մէկին:

Իրա՛ւ երիտասարդութիւնը այն է՝ որ Ամանորի գիշերը մինչեւ ուշ ատեն արթուն կը մնաս, մինչ միջին տարիքին արդէն ստիպուած ես մնալու:

Երէկ գիշեր 11-12-ի միջեւ, Հին Տարին իր ոտնահետքերը թողած ժամանակ կայսրութեան սահմանին վրայ, կը սպասէր կոշնակի հնչելուն, որ զինք կանչէր միանալու անցած տարիներու խումբին...

Եւ Նոր Տարին մեծ սիրով ողջունեց անմխիթար Հին Տարին ու նստելով անոր մօտ, սպասեց նշանին սկսելու իր դեգերումը աշխարհի վրայ: Երկուքն ալ հարազատ քոյրեր էին, ըլլալով թոռնուհիները ժամանակին, հոգ չէ թէ մէկը աւելի տարեց կ'երեւէր քան միւսը, այդ ալ անշուշտ տարիքէ աւելի արդիւնք էր անոր տեսած դժուարութիւններուն, հակառակ անոր որ միայն 12 ամիսներ կը բաժնէին զիրենք իրարմէ:

Նոր Տարին ուրախ յայտարարեց թէ բաւականին հոյակապ, բուրումնալից, վարդի ընտանիքին պատկանող յոյսեր ունէր իր կողովին մէջ:

Որուն Հին Տարին պատասխանեց, ըսելով. «Շուտով անոնք պիտի կորսնցնեն իրենց բոյրը, ուրիշ ի՞նչ բերած ես բարի գալուստ մը ապահովելու դժուարահաճ մարդկային ցեղէն»: